world
from Dawn till Dusk

Աշխարհը արևածագից մինչ մայրամուտ

POLSKI INSTYTUT SZTUKI FILMOWEJ

Ministerstwo Kultury i Dziedzictwa Narodowego

I, CULTURE culture.pl

TVP TELEWIZJA POLSKA

BELSAT

world from Dawn till Dusk Doc'n'World Foundation

«Աշխարհը՝ արևածագից մինչ մայրամուտ»-ը Մաչեյ Դրիգաս և Մաչեյ Դրիգասի հեղինակային նախագիծն է, որի իրականացման հիմքում ընկած են աշխարհի տարբեր քաղաքների կինոդպրոցներում անցկացվող սեմինարները:
Մասնակից ուսանողները, վերոնշյալ պրոֆեսորների անմիջական ղեկավարությամբ, մեկ ամսվա ընթացքում աշխատում են վավերագրական ֆիլմերի պատրաստման վրա, որոնց նյութը («հերոսը») քաղաքն է:Արդյունքում ստեղծվում են մեկ ժամ տևողությամբ վավերագրական ֆիլմեր, որոնք ներկայացնում են այդ քաղաքների դիմանկարը:

Գեղարվեստական առանձնահատկությունները
Յուրաքանչյուր ուսանող ընտրում է «իր ժամանակահատվածը» և փորձում գտնել իրավիճակ, որն այդ ժամանակի մեջ է:Չնայած նրան, որ յուրաքանչյուր ֆիլմ առանձին ամբողջություն է՝ բնորոշ դրամատիկական կառուցվածքով, միևնույն ժամանակ դառնում է մեկ ժամ տևողությամբ ֆիլմի մի մասը:
Յուրաքանչյուր ուսանող ռեալիզացնում է «իր ժամը», և խմբակային աշխատանքը վերածվում է քաղաքի դիմանկարի՝ «արևածագից մինչ մայրամուտ»:

Ձևաչափային առանձնահատկությունները
Ֆիլմերը ստեղծվելու են դիտարկումների, զննումների արդյունքում՝ առանց հատուկ տեսարանների բեմադրության՝ չունենալով լրագրողական նյութին բնորոշ տարրեր:
Յուրաքանչյուր ֆիլմի տևողությունը 4-5 րոպե է. այս ձևաչափը ենթադրում է հնարավորինս կարճ և բովանդակալից արտահայտման ձև: Առանձին ֆիլմերը, ինչպես նաև մեկ միասնականը, պայմանավորված են «դետալից՝ փոխաբերություն» մեթոդի կիրառումով:
Ծրագրի արդյունքում 2011 թ. հանրությանը ներկայացան նախագծի գեղարվեստական ղեկավարները և ստեղծագործական խմբերը, ցուցադրվեցին հինգ ֆիլմերը («Վարշավայից Բրյուսել՝ աշխարհի շուրջը». Վարշավա, Մինսկ, Կիև, Մոսկվա, Պեկին, Տոկիո, Բրյուսել):
2013 թ. ծրագիրն իրականացվելու է 4 քաղաքներում՝ Քիշինև, Երևան, Թբիլիսի, Բիդգոշ:

Yerevan State Institute of Theatre and Cinematography
Armen Mazmanyan - the Rector of YSITC, professor, director,
RA Honoured Art Worker. RA Yerevan 0002, 26 Amiryan st.
Tel: (+374 10) 53-94-14; Fax: (+374 10) 53-62-33; e -mail: info@ysitc.am; www.ysitc.am

Doc'n'World Foundation ul. Perkalowa 8 02-834 Warszawa Polska
tel/fax: +48 42 676 75 41 tel: +48 609 333 407 www.wfdtd.pl office@docworld.pl

Ամեն օր հեռուստատեսային հաղորդումների միջոցով տեսնում ենք աշխարհի պատկերը՝ պատերազմներ, երկրաշարժեր, քաղաքական շքերթներ, մեջբերումներ ակցիաներից, ֆուտբոլային խաղեր, նորաձևության ցուցադրություններ: Յուրաքանչյուր կարևոր իրադարձություն հասանելի է մեզ իրագործման պահին և աշխարհի ցանկացած անկյունից:
Արդյո՞ք դա է մեր աշխարհի իրական պատկերը, թե՞ սոսկ մակերեսային արտացոլանքն է: Արդյո՞ք հնարավոր է ներխուժել ներս՝ անտեսելով նորությունների պատնեշը. գուցե Պեկինում ապրող ձկնավաճառի համեստ ժպիտը կամ մոսկովյան մետրոյի մուրացկանի մտազբաղ հայացքը մեզ ավելի շատ կներկայացնի ժամանակակից աշխարհը այնպիսին, ինչպիսին կա իրականում:
Զննել, դիտարկել և ներկայացնել իրականությունը. այս է վավերագրության հիմնական մեթոդը, որն առաջարկել ենք Լոձի կինոդպրոցի ուսանողները:Տարիների ընթացքում նրանք հենց այս համատեքստում իրականացրել են «Լոձը՝ արևածագից մինչև մայրամուտ» ծրագիրը:

Մենք հրավիրել ենք լավագույն լեհ մասնագետներին մեզ հետ համագործակցելու՝ Մարցել Լոզինսկի, Յացեկ Բլավուտ, Վիտա Ժալակյավիչյուտե, Պավել Լոզինսկի, Յացեկ Պետրիցկի և Մատեուշ Վերներ՝ աշխարհի տարբեր մայրաքաղաքներում «Աշխարհը՝ արևածագից մինչ մայրամուտ» ծրագիրն իրականացնելու համար:
Մինսկի, Մոսկվայի, Պեկինի և Տոկիոյի կինոդպրոցների ուսանողներն արդեն «վավերագրել» են իրենց քաղաքները՝ ներկայացնելով իրական պատկերներ, որոնք տարբերվում են ամենօրյա հեռուստատեսային հաղորդումներից:
2013 թ. այս ծրագրին միանում են Քիշինևի, Երևանի, Թբիլիսիի և Բիդգոշի ուսանողները:
Ծրագրի արդյունքում կստեղծվի ֆիլմերի շարք, որը խորապես կարտացոլի ժամանակակից իրական աշխարհը:

Միրոսլավ Դեմբինսկի, Մաչեյ Դրիգաս

«Աշխարհը՝ արևածագից մինչ մայրամուտ»
Նախագծի հեղինակներ

Լոձի կինոդպրոցի պրոֆեսոր
-ավելի քան 20 տարի է նկարահանում է վավերագրական ֆիլմեր
-նկարահանել է շուրջ 30 ֆիլմ, որոնցից հատկապես նշանավոր են՝
«Նարնջագույն այլընտրանք», 1989
«Իկար», 1999
«Հաղթողները և պարտվողները», 2004
«Բելառուսերենի դասը», 2006
«Երաժշտական պարտիզանուհին», 2007
-ավելի քան 80 մրցանակների դափնեկիր, այդ թվում՝
Հատուկ մրցանակ, Ամստերդամ
Հատուկ մրցանակ, Օբերհաուզեն
Հատուկ մրցանակ, Լայպցիգ
Եվրոպայի մրցանակ, Բեռլին
«Բրոնզե լայկոնիկ», Կրակով
«Ոսկե դարպասներ», Սան-Ֆրանցիսկո
«Սպիտակ կոբրա», Լոձ

Լոձի կինոդպրոցի պրոֆեսոր
-ավելի քան 20 տարի նկարահանում է վավերագրական ֆիլմեր, այդ թվում՝
«Լսեք իմ ճիչը», 1991
«Անկշռելիության վիճակում»,1994
«Հույսի ձայնը», 2002
«Մեկ օր Լեհական ժողովրդական հանրապետությունում», 2005
-ավելի քան 20 մրցանակների դափնեկիր, այդ թվում՝
Ֆելիքս Եվրոպական կինոմրցանակ
«Արծաթե վիշապ», Կրակով
Գրան Պրի, Մելբուրն
Գրան Պրի, Մոնտե Կառլո
Հատուկ մրցանակ, Իտալիա
«Ոսկե դարպասներ», Սան- Ֆրանցիսկո
«Սպիտակ կոբրա», Լոձ

-Կարդինալ Ստեփան Վիշինսկու համալսարանի և Վարշավայի հասարակական հոգեբանության բարձրագույն դպրոցի պրոֆեսոր
-Կինոյի տեսաբան, մշակույթի փիլիսոփա
-մի շարք գրքերի և տասնյակ հրապարակումների հեղինակ
»Լեհաստան-Ռուսաստան. նոր հայացք» և «Լեհաստան-Իսրայել. նոր հայացք» կինոյի ոլորտին առնչվող սեմինարների հեղինակ և կազմակերպիչ

-Անջեյ Վայդայի կինոդպրոցի պրոֆեսոր
-ավելի քան 40 տարի նկարահանում է վավերագրական ֆիլմեր
-նկարահանել է ավելի քան 40 ֆիլմ, այդ թվում՝

«Ինչպես ապրել», 1977
«Հասունության քննություն», 1979
«Բարձրախոսի ստուգում», 1980
«Իմ տեղը», 1986
«89 մմ Եվրոպայից հեռու», 1993
«Ամեն ինչ կարող է պատահել», 1995
«Որպեսզի չցավի», 1998
«Ցպահանջ», 2008
-ավելի քան 50 մրցանակի դափնեկիր, այդ թվում՝
Օսկար (անվանակարգ)
Ֆելիքս Եվրոպական կինոմրցանակ
Գրան Պրի, Օբերհաուզեն
«Ոսկե աղավնի», Լայպցիգ
«Ոսկե վիշապ» և «Ոսկե Լայկոնիկ», Կրակով
«Ոսկե դարպասներ», Սան- Ֆրանցիսկո
«Սպիտակ կոբրա», Լոձ



Անջեյ Վայդայի կինոդպրոցի պրոֆեսոր
-ավելի քան 30 տարի նկարահանում է վավերագրական ֆիլմեր
-նկարահանել է ավելի քան 30 ֆիլմ, այդ թվում՝

«Անոնորմալները», 1990
«Ծնված՝ մեռնելու համար», 2004
«Թագով առնեղը» 2005
«Մարտիկը», 2007
«Դեռ երեկո չէ», 2008
-ավելի քան 60 մրցանակների դափնեկիր, այդ թվում՝
Գրան Պրի, Տորոնտո
«Արծաթե առյուծներ», Գդին
«Ոսկե Լայկոնիկ» և «Բրոնզե Լայկոնիկ», Կրակով
Հատուկ մրցանակ, Մայնհայմ
Հատուկ մրցանակ, Սան Սեբաստիան
«Սպիտակ կոբրա», Լոձ

-Անջեյ Վայդայի կինոդպրոցի պրոֆեսոր
-մի քանի տարի է՝ նկարահանում է ֆիլմեր, այդ թվում՝
«Շիզոֆրենիա», 2001
«Այն կողմում», 2007
«Աղբյուր», 2009
-մի շարք մրցանակների դափնեկի, այդ թվում՝
"Gold Remy" մրցանակ, Հյուսթոն
«Սպիտակ կոբրա», Լոձ
Գրան Պրի, Կելց

-Գդինի կինոդպրոցի պրոֆեսոր
-ավելի քան 20 տարի նկարահանում է վավերագրական ֆիլմեր
-նկարահանել է բազմաթիվ ֆիլմեր, այդ թվում՝
«Ծննդավայր», 1992; «Վանդակ»,1996; «Այդպիսի պատմություն», 1999; «Քույրերը», 1999; «Դոների արանքում», 2004; «Քիմիա», 2009
-մի շարք մրցանակների դափնեկիր, այդ թվում՝
Եվրոպայի մրցանակ, Բեռլին
Հատուկ մրցանակ, Լայպցիգ
«Ոսկե Լայկոնիկ» և «Արծաթե Լայկոնիկ»; «Ոսկե վիշապ», Կրակով; «Սպիտակ կոբրա», Լոձ; «Ոսկե աղավնի», Լայպցիգ



- օպերատոր, ավելի քան 30 տարի նկարահանում է ֆիլմեր
-որպես օպերատոր նկարահանել է ավելի քան 100 ֆիլմ, այդ թվում՝
«Գավառական արտիստներ», ռեժիսոր՝ Ագնեշկա Հոլլանդ, 1978
«Կինոյի սիրահարը», ռեժիսոր՝ Քշիշտոֆ Կեսլևսկի, 1980
«Հարցաքննություն», ռեժիսոր՝ Ռիշարդ Բուգայսկի, 1982
«Անգութը», ռեժիսոր՝ Կլայվ Գորդոն, 1993
«Հովիտը», ռեժիսոր՝ Դեն Ռիդ, 1998
«Հարևանությամբ գտնվող խողովակը», ռեժիսոր՝ Նինո Կիրտաձե, 2005
-մի շարք մրցանակների դափնեկիր, այդ թվում՝
FIPRESCI, Կանն
Golden Hugo, Չիկագո
Գրամ Պրի, Մոսկվա
Ոսկե դափնու տերև,Գլխավոր դերակատարուհի, Կանն
Լավագույն եվրոպական ֆիլմ, Բեռլին
Ֆելիքս Եվրոպական կինոմրցանակ, լավագույն օպերատորական աշխատանք
BAFTA, լավագույն օպերատորական աշխատանք; Prix Italia, Իտալիա, 1999; Գրան Պրի, Բիարրից

-Գդինի կինոդպրոցի պրոֆեսոր
-մի շարք գեղարվեստական և վավերագրական ֆիլմերի մոնտաժի ռեժիսոր, այդ թվում՝
«KATYN», ռեժիսոր՝ Անջեյ Վայդա, 2007
«Ցպահանջ», ռեժիսոր՝ Մարցել Լոզինսկի, 2008
«Քաղաք՝ առանց Աստծո», ռեժիսոր՝ Յացեկ Պետրիցկի, 2009
«Գույքագրում», ռեժիսոր՝ Պավել Լոզինսկի, 2010
«Ուրիշի նամակներ», ռեժիսոր՝ Մաչեյ Դրիգաս, 2011
«Սև հինգշաբթի», ռեժիսոր՝ Անտոնի Կրաուզե, 2011
-մի շարք մրցանակների դափնեկիր, այդ թվում՝
«Արծիվ»,լավագույն մոնտաժային աշխատանք, Լեհաստան
Մրցանակ մոնտաժի համար, Պոտսդամ
Մրցանակ մոնտաժի համար, Կոշալին